

**ԳԱՎԱՌԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԻ
ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ 6**

2013 թ. ապրիլի 20-ին տեղի ունեցավ Գավառի պետական համալսարանի գիտխորհրդի նիստ: Նիստին մասնակցում էին գիտխորհրդի 35 անդամներից 26-ը:

Օրակարգ՝

1.ԳՊՀ հեռակա ուսուցման ֆակուլտետի հաշվետվություն:

/զեկ՝ պրոռեկտոր Ն.Ա.Կուտուզյան/

2.ԳՊՀ հանրության հետ կապերի և լրատվության բաժնի հաշվետվություն:

/զեկ՝ բաժնի վարիչ Պ.Օ.Մուրադյան/

3.ԳՊՀ-ում էլեկտրոնային ուսուցման համակարգի ներդրման գործընթացը և դրա ծրագրային – տեխնիկական ապահովումը:

/զեկ՝ պատասխանատու Վ.Կ.Ավետիսյան/

4.Ընթացիկ հարցեր:

Նիստի սկզբում ելույթ ունեցավ ԳՊՀ ռեկտոր Ռ. Հակոբյանը: Նա ներկայացրեց Գավառի պետական համալսարանի հիմնադրման 20-ամյակին նվիրված միջոցառումների ծրագիրը: ԳՊՀ հեռակա ուսուցման ֆակուլտետի գործունեության հաշվետվությունը ներկայացրեց ուսումնագիտական գծով պրոռեկտոր Ն. Կուտուզյանը: Զեկուցողը նախ կարևորեց կրեդիտային համակարգի ներդրման փաստը հեռակա ուսուցման ֆակուլտետում, ապա ներկայացրեց ինչպես ֆակուլտետում ընդգրկված ուսանողների ընդհանուր թվաքանակը, այնպես էլ ապագա շրջանավարտների քանակը /բակալավր՝ 141, դիպլոմավորված մասնագետ՝ 165 /: Այնուհետև Ն. Կուտուզյանն անդրադարձավ ուսումնական առաջադիմությանը՝ ընդհանուր և ըստ բաժինների, կատարվեց համեմատություն առկա և հեռակա ուսուցման համակարգերի միջև, ներկայացվեցին և քննարկվեցին ուսանողական հարցումների արդյունքները:

ԳՊՀ հանրության հետ կապերի և լրատվության բաժնի հաշվետվությունը ներկայացրեց բաժնի վարիչ Պ. Մուրադյանը: Խոսելով կատարված և կատարվելիք աշխատանքների մասին՝ զեկուցողը կարևորեց համալսարանի գործունեության համակողմանի լուսաբանումը հանրության շրջանում: Դրան նպաստում են ինչպես համալսարանի կայքէջի առկայությունը, այնպես էլ համալսարանի գործունեությունը ներկայացնող<<Գե-

դամա >> հեռուստաալիքով հեռարձակվող համալսարանական ժամերը: Առավել կարևոր է այն, որ ուսանողներին արդեն մատչելի են տարբեր դասընթացներին վերաբերող դասախոսությունների էլեկտրոնային տարբերակները: Ընդլայնվում է համագործակցությունը այլ բուհերի հետ:

ԳՊՀ-ում էլեկտրոնային ուսուցման համակարգի ներդրման գործընթացի և դրա ծրագրային- տեխնիկական ապահովման խնդիրներին անդրադարձավ ԳՊՀ համացանցային պատասխանատու Վ.Ավետիսյանը: Նա նկարագրեց իր կողմից ստեղծված ուսուցման էլեկտրոնային համակարգը՝ www.Elearning.gsu.am, որը հնարավորություն է տալիս համապատասխան մուտքաբառերի միջոցով մուտք գործել համակարգ և օգտվել այնտեղ տեղադրված նյութերից:

Ընթացիկ հարցերի մասին խոսեց Ն.Կուտուզյանը: Նա ասաց, որ գիտխորհրդին է դիմել պատմության ամբիոնի դասախոս պատմական գիտությունների թեկնածու Արմենակ Խաչատրյանը՝ իրեն դոցենտի գիտական կոչում շնորհելու խնդրանքով: Քանի որ Ա.Խաչատրյանի գիտամանկավարժական գործունեության տվյալները համապատասխանում են ԲՈՀ-ի առաջադրած պահանջներին, ուստի առաջարկվեց հարցը դնել քվեարկության: Կազմվեց հաշվիչ հանձնաժողով. նախագահ՝ Հ.Ղաջոյան, անդամներ՝ Պ.Մուրադյան, Վ.Ավետիսյան: Անցկացվեց փակ /գաղտնի/ քվեարկություն, որի արդյունքները ներկայացրեց Հ.Ղաջոյանը. կողմ՝ 26, դեմ՝ 0, անվավեր՝ 0:

Հիմք ընդունելով զեկուցումները և քվեարկության արդյունքները՝

Որոշեցին՝

- 1.Ն.Կուտուզյանի հաշվետվությունն ընդունել ի գիտություն, կատարված աշխատանքները գնահատել բավարար:
- 2.Պ.Մուրադյանի հաշվետվությունն ընդունել ի գիտություն, կատարված աշխատանքները գնահատել բավարար:
- 3.Հավանություն տալ Վ.Ավետիսյանի մշակած էլեկտրոնային ուսուցման համակարգի ներդրման աշխատանքներին, այն դնել գործածության մեջ:
- 4.Ա.Խաչատրյանին շնորհել դոցենտի գիտական կոչում, և գիտխորհրդի որոշումը ներկայացնել ԲՈՀ՝ հաստատման:

Գիտխորհրդի նախագահ՝

Ռ. Խ. Հակոբյան

Գլխավոր տնօրեն՝

Թ. Ա. Ասոյան